# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

02.12.2024 թ.

ք.Երևան, Նորք-Մարաշ

Սույն թվականի դեկտեմբերի 2-ին՝ ժամը 11:30-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով, Նորք-Մարաշ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Նիկա 2006» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Նորք Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան փ., 38/9 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանը: Նա նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, Երևանի քաղաքապետարանը և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Ընկերության ներկայացուցիչ՝ բնապահպանական մասի պատասխանատու Արթուր Մինասյանը ներկայացրեց շենքի կառուցման ժամանակ առաջացող հնարավոր բնապահպանական ռիսկերը և դրանց նվազեցմանն ուղղված նախատեսվող միջոցառումները՝ մթնոլորտային օդի, հողի որակի և աղմուկի հետ կապված:

Շենքի նախագծման աշխատանքներն իրականացնող ընկերության ներկայացուցիչը ներկայացրեց շենքի կառուցման վերաբերյալ տեղեկատվություն, նշեց կառուցվող շենքի տեխնիկատնտեսական ցուցանիշները, ներկայացրեց շինարարության աշխատանքների կազմակերպման միջոցառումները և շինարարության փուլում նախատեսվող

աշխատանքները: Նա նշեց, որ նախագծում կատարվել է փոփոխություն և կանաչապատման մակերեսն ավելացել է:

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ Է. Արամյանը նշեց, որ իրենց կողմից ուսումնասիրվել է ՇՄԱԳ հաշվետվությունը և կարծիքը դրական է:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնելուց հետո Հարությունյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ իրենց առաջարկությունները, դիտողությունները ներկայացնելու և հուզող հարցերը հնչեցնելու համար:

Ներկաները հարց բարձրացրեցին նախատեսվող ավտոկայանատեղիների, բնակարանների քանակի, գնի և այլնի վերաբերյալ, որին ի պատասխան ընկերության ներկայացուցիչները տվեցին պատասխաններ:

Քննարկման ավարտին ներկաները նշեցին, որ ողջունում են նոր շենքի կառուցումը:

Ք. Հարությունյանը ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին Նորք-Մարաշ վարչական շրջանի աշխատակիցները, Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը, նախաձեռնողի և նախագծող կազմակերպության ներկայացուցիչները:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

**Վարող և քննարկումների պատասխանատու՝** **Ք.Հարությունյան**

**«Նիկա 2006» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝** **Ա. Բարսեղյան**